ՎԱՐԴԱՆ ՈՍԿԱՆՅԱՆ

ԿԱՊՈՒՅՏԻ ԱՐԳԵԼՔԸ ԵԶԴԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Եզդիականության՝ այս ներփակ ե չափազանց հետաքրքիր կրոնա-դավանական ուղղության, բազմաթիվ կողմեր ցարդ կարոտ են ավելի մանրամասն և խորը գիտական ուսումնասիրության, չխոսելով, այլևս, մի շարք խնդիրների մասին, որոնք դուրս են մնացել հետազոտողների ուշադրությունից: Թերևս, նման՝ գիտնականների ուսումնասիրություններից դուրս սպրդած, հարցերից է նաև կապույտ գույնի մասնակի արգելքը եզդիական դավանանքում:

Եզդիների շրջանում համընդհանուր տարածում ունի այն փոքր-ինչ տարօրինակ հավատալիքը, ըստ որի եզդին իրավունք չունի կրելու կապույտ գույնի հագուստ (քրդ. kirasê şîn):[1] Նշված հավատալիքը որպես բանավոր ավանդություն, գիտե գրեթե յուրաքանչյուր եզդի:

Առաջին անգամ, սակայն այն գրավոր կերպով վկայված է եզդիների սուրբ գրքերից մեկում՝ «Սև Մատյանում» (Meshefê reš). «*Մեզ համար արգելված է ... կապույտ գույնը*»[2] և եզդի հոգևորականության կողմից 1873թ. Օսմանյան *Բարձր Դռանը* ուղղված դիմում-խնդրագրում, որտեղ հավելվածի ձևով ներկայացվող եզդիականության բարոյա-էթիկական և գործնական դրույթների շարքում՝ 12-րդ հոդվածում, ասվում է. «*Մեզանում արգելվում է կապույտ հագուստը*»[3]:

Վերոհիշյալ ուշագրավ սովորույթի արմատները և առաջացման պատճառները, չարժանանալով գիտնականների ուշադրությանը, իրենց՝ եզդիների (հոգևորական դասերի՝ շեյխերի եւ փիրերի) կողմից, շատ այլ երևույթների նման մեկնաբանվում են տարբեր՝ հաճախ չկանոնակարգված և իրարամերժ եղանակով: Կապույտ հագուստի արգելքի մասին ներկայումս տարածված են հետևյալ երկու մեկնությունները.[4]

1. (առավել տարածված), Քերբալա քաղաքի մոտակայքում շիական առաջին իմամ Ալի իբն աբու-Թալիբի որդիներ Հասանի և Հուսեյնի նահատակությունից հետո՝, շիաները որպես սգո նշան հագնում են կապույտ զգեստ,

մինչդեռ վերջիններիս հակառակորդ Օմայան Յազիդ որին Մու'ավիյա խալի-ֆը, որը եզդիականության մեջ նույնացվում է աստծո (xwedē) երեք մարմնավորումներից մեկի՝ Սըլթան Էզիդի (Siltan Ezīd) հետ, այդ օրվանից արգելում է իր հետևորդներին (*իմա՝* եզդիական համայնքին) կապույտ զգեստ կրել (*հեղինակի գրառումը*):

2. Քանի որ կապույտը երկնքի և տիեզերքի գույնն է, իսկ տիեզերքը Աստծո բնակատեղին (mala xwedē), հետևաբար երկրագնդի վրա ապրող հասարակ մահկանացուներից և ոչ ոք իրավունք չունի աստվածային՝ կապույտ գույն կրելու (*հեղինակի գրառումը*):[9]

Բերված մեկնություն-ավանդություններից, դատելով իր տարածման փոքր շրջանակից և ավելի վերացարկված բնույթից, երկրորդը հավանաբար ստեղծվել է համեմատաբար ուշ շրջանում: Ինչ վերաբերում է առաջինին, ապա հաշվի առնելով պատմական իրակությունների առկայությունը, ինչպես նաև կապույտի՝ որպես սգո գույնի մասին պատկերացումը, վերջինս առավել հիմնավորված և հավաստի է թվում:

Հարկ է նշել, որ եզդիականությունը, ձևավորվելով միջնադարյան մահմեդական միստիկ *'աղավիյա* աղանդի առանցքի շուրջ, իր մեջ ամփոփել է նաև սուֆիական (մահմեդական միստիցիզմի) բազմաթիվ տարրեր, որոնցից կարելի է թվարկել սիրամարգի (Tawusē Melek) կերպարը, մոգական շրջանի (dayire) խորհուրդը և այլն[7] (*տես՝* Brown J., The Dervishes or oriental spiritualism. London 1912, pp. 52-65 passim):

Ուշագրավ է հատկապես այն, որ կապույտ գույնը սգո խորհրդանիշ է համարվում նաև սուֆիականության մեջ: Այս մասին են խոսում պարսից դասական գրականության զանազան, նույնիսկ սուֆիզմին տուրք չտված հեղինակների ստեղծագործություններում կապույտի՝ որպես սգո գույնի մասին առկա բազմաթիվ վկայություններ: Բերենք մի քանի օրինակներ.

Բարի հույս բացեց նրանց սրտի համար,
Որպեսզի չհագնեն վշտից կապույտ:

Ջաալ աղ-Դին Ռումի

Ով Խաղանի՝ որդուդ վշտից հագար կապույտ.
Շահի սգից ընդունված է միշտ սև հագնել:

Խաղանի Շիրվանի[8]

Հաջորդ՝ ոչ պակաս կարևոր փաստն այն է, որ միջնադարյան մահմեդական միստիկ բազմաբնույթ հոսանքների հետևորդ շարքային ճգնակյացները՝ դերվիշները կամ սուֆիները, որպես կանոն կրում էին կապույտ քուրձ[9] (xirqa, dalq), այն դեպքում, երբ միստիկ նվիրապետության «վերին շարքե-

ռում»՝ շեյխերի և մուրշիդների (müršīd) քուրձը պարտադիր կերպով սպիտակ էր: Հետաքրքիր է, որ մինչև օրս էլ Իրաքի հյուսիսում՝ Լալեշ սրբավայրում բնակվող եզդի հոգևորականության ներկայացուցիչները՝ շեյխերը և փիրերը կրում են սպիտակ, երկարափեշ հագուստ[10] (քրդ. xerqe). մինչդեռ շեյխ Աղի բին Մուսաֆիրը (Šīxādī) եզդիական ծիսական հիմներում (qewl ū beyt) պատկերվում է սև քուրձով [11]:

Ինչևիցե, բազմաթիվ վկայություններ կան այն մասին, որ «շարքային» միստիկը կրում էր կապույտ զգեստ: Այս առումով պատկերավոր է հատկապես «*Ասրար ալ-Թաուհիդ*» («Միաստվածության գաղտնիքներ») երկում բերվող հետևյալ նկարագրությունը.

«Լուսաբացին, ժամանակին Մեյհանա հասա: Երբ աչքս ընկավ Մեյհանային, ողջ տափաստանը կապույտ տեսա՝ այնքան որ կապտազգեստ սուֆիներ էին դուրս եկել տափաստան»[12]:

Իրենք՝ սուֆիզմի հետևորդները կապույտի որպես ամենօրյա զգեստի գույնի ընտրությունը հիմնավորում են թե զուտ գործնական, և թե տեսակսնմիստիկ նկատառումներով:

Հուջվիրին «*Քաշֆ ալ-Մահջուբ*»-ում («Քողարկվածի բացահայտումը») տալիս է, թերևս, առավել ամբողջական բացատրություն.

... այն բանի իմաստը, որ նրանց [սուֆիների] մեծ մասի հագուստները կապույտ են, մեկն այն է, որ նրանց աղանդի (թարիղաթի) հիմքը ճանապարհորդությունն ու շրջագայությունն է, և սպիտակ զգեստը ճամփորդության մեջ չի դիմանա, և սրա լվանալը դժվար է, և յուրաքանչյուր ոք կձգտի [տիրանալ] դրան [հագուստին]:

Եվ մյուսը այն է, որ կապույտ հագնելը նշան է մահն ու փորձությունը ընտրածների և վշտահարների հագուստն է:

.... [սուֆիականության] հետևորդները (մուրիդները), քանի որ սրտի նպատակը [աշխարհիկ] գործերում բացի մեղքից [ուրիշ ոչինչ] չհամարեցին և սրտում բացի ավերածությունից ոչինչ [չտեսան] և ժամանակի մեջ բացի մահվանից ոչինչ՝ կապույտ հագան...:

Մեկը, որ (միստիկ) գիտություն էր պահանջում, մի դերվիշի ասաց. «Ինչու՞ ես այս կապույտը հագել»: Ասաց. «Մարգարեից, խաղաղություն նրան, երեք բան մնաց՝ մեկը աղքատությունը, մյուսը՝ գիտությունը և երրորդը՝ սուրը: Սուրը աղքաները գտան և անտեղի բանեցրին, և գիտությունը իմաստունները վերցրին ու բավարարվեցին միայն սովսրելով, և աղքատությունը աղքատները վերցրին և զովերգման առարկա դարձրին: Եվ ես ի նշան այս երեք խմբի փորձանքի [սգո] կապույտ հագա»[13]:

Այսպիսով ինչն է պատճառը, որ մահմեդական ծայրահեղ միստիկական հոսանքների և աղանդների հետ սերտ աղերսներ ունեցող եզդիականությունը կապույտ զգեստի հարցում նման կտրուկ կերպով հեռանում է իր հետ տիպաբանական և, հավանաբար, նույնիսկ ծագումնաբանական հարաբ-

զատ շատ կողմեր ունեցող մյուս հոսանքներից: Թերեւս, բանն այն է, որ վաղ եզդիական համայնքը եւ հնարավոր է նույնիսկ եզդիականության համար հիմք հանդիսացած '*աղավիյա* աղանդը, որպեսզի նաև արտաքնապես տարբերվի շրջապատի թե՛ ավելի վաղ ձևավորված մահմեդական խիստ ազդեցիկ եղբայրակցություններից (ինչպիսին է, մասնավորապես, *կադիրիյան*) և թե՛ նեստորական-քրիստոնյաներից, արգելքի տակ է դրել վերջիններիս մեջ լայն տարածում գտած կապույտ զգեստ կրելը, կապույտ գույնը դիտարկելով որպես օտար՝ ոչ յուրային համայնքին պատկանելության նշան: Որպես այս փաստի ապացույց կարելի է համարել նաև եզդիականության հավատո հանգանակի տարրերից մեկը հանդիսացող, այլադավանի կամ այլազգիի հետ ամուսնության խիստ արգելքը[14], որը խախտողը ստանում է «*կապույտ փեշ*» (delinga šīn), այսինքն՝ «օտարի, այլադավանի հետ ամուսնացած» անվանումը, իսկ օտարի, այլադավանի հետ ամուսնանալ բառացի թարգմանությամբ, նշամակում է «սեփական փեշը կապտացնել» (delinga xwe šīn kirin):

Այսու, հարկ է նշել, որ եզդիականության, որպես ինքնուրույն դավանական հոսանքի, ձևավորումը ընթացել է հարակից ծայրահեղ մահմեդական հերձվածների հետ սերտ կապերի և փոխազդեցությունների երկարատև փուլով: Հետևաբար վերջինիս դավանական, հավատալիքային և ծիսակարգային բազմաթիվ մութ կողմեր կարող են մեկնաբանվել մահմեդական միստիցիզմի և աղանդավորական հոսանքների հետ համեմատության մեջ միայն:

SUMMARY

Many aspects of the Yezidism, one of the most esoteric and interesting confessions, until present days need additional and more deep investigation. One of them, of course, is the problem of partial taboo on the blue color. This prohibition is registrated in "Black Book", one of the two sacred books of the Yezidism and in the letter of Yezidi cleargy to the Ottoman Government at 1873. Now there are two oral legends about the roots of this prohibition spread among the Yezidis. The analises of mentioned legends and the comparison with the Sufi tradition shows that the emergence of the forbidiness of blue among the Yezidi community is conditioned by the striving of Yezidis to define themselves amond other more influenceable orders, such as Qadiriya.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նշված ավանդությունը տարածված է հայաառանարնակ եզդիների շրջանում: Իրաքում բնակվող եզդիների մեջ ներկայումս նման հավատալիքի գոյության մասին, ցավոք, որեէ տեղեկություն հայթայթել չհաջողվեց: Այսուհանդերձ, չնայած նման սովորույթի առկայությանը, այժմ արդեն եզդիները հաճախ խստորեն չեն պահպանում կապույտ հագուստի արգելքը: Հետաքրքիր է, որ քրդերենում šīn նաև նշանակում է «սուգ, շիվան», սակայն այս բառը հանգում է հին իրան. *xšaiwan - ձևին. մինչդեռ šīn –«կապույտ»՝ *xšaina- արմատին:

2. Ասատրյան Գ., Փոլադյան Ա., Եզդիների դավանանքը. - ՊԲՀ, N 4, էջ 131-150 (առանձնատիպ), Ե. 1989, էջ 146

3. idem.

4. Կա ևս մի ավանդություն, ըստ որի՝ կապույտ գույնը կրելն արգելել է Սալաը Թավուսը (Tawsē Melek), երազում երևալով *քոչակներից* (եզդիական հոգևոր սպասարկման դասերից) մեկին (*հեղինակի գրառումը*):

5. Իրականում Քերբալայի մոտ 682 թ. զոհվել է միայն Հուսեյնը, իսկ վերջինիս եղբայր Հասանը հավանաբար թունավորվելով Սու'ավիյա խալիֆի կողմից, վախճանվել է 670 թ.:

6. Հետաքրքիր է, որ սուֆիականության մեջ նույնպես կապույտը մեկնաբանվում է որպես երկնքի գույն և այն պետք է մարդու կողմից գործածվի Աստծուն ճանաչելու համար (Курбанмамадов А., Эстетическая доктрина суфизма. Душанбе 1987, с. 43):

7. Ավելորդ չէ նշել նաև, որ *'աղավիյա* աղանդի հիմնադիր նշանավոր Աղի բին Մուսաֆիրը (XI-XII դդ.) ժամանակին ճանաչել է նաև մահմեդական միստիցիզմի այնպիսի կարկառուն դեմքի, ինչպիսին Աբդ ալ-Կադիր Գիլանին է՝ հռչակավոր *կադիրիյա* աղանդի հիմնադիրը (Никитин В., Курды. М 1964, с. 326):

8. Dehxodā A. A. Loghatnāme. p. 15998

9. Boxārāyī A.-A., Farhang-e aš'ār-e Hafez, Tehran 1985 (1364), p. 209

Միջնադարում կապույտ (կամ սև) հագուստ էին կրում նաև նեստորական հոգևորականները, որի պատճառով էլ, մասնավորապես, Ֆիրդոսին նրանց կոչում է *«սգավորներ» (պրսկ.* sūgvārān). հմտ.՝

Վազելով հասավ մինչև քահանաների բնակատեղին:
Այդ սգավորներին [քահանաներին] ասաց այն ինչ որ տեսավ:

Բացի քրիստոնյաներից կապույտ հագուստ էին կրում նաև հրեա հոգևորականները: Թորաթում մասնավորապես ասվում է. «*Իֆուդ* կապադ (հոգևորականի հագուստը) ամբողջովին լաջվարդագույնից (մուգ կապույտ) պատրաստիր» կամ «Ապա *իֆուդ* կապան ամբողջովին լաջվարդ կտորից պատրաստեցին» (Boxārāyī, p. 211):

10. Ավելորդ չի լինի հիշատակել քրդական հետևյալ ասացվածքը. her reng reng e, lē spī rengē rengan e - «ամեն գույն գույն է, բայց սպիտակն է գույների գույնը» (*հեղինակի գրառումներից*):

Բացի այս, սպիտակ գույնը սուֆիական գեղագիտության մեջ նույնացվում է Աստծուց ճառագող լույսին: Այն խորհրդանշում է աստվածային բարությունը, մաք-

թությունը և պայծառությունը, իսկ սպիտակ քուրձ կրող միստիկը պետք է հոգով մաքուր լինի ինչպես, որ վաղ առավոտն (պրսկ. subh-i sādīq) է և մարդկանց պետք է լուսավորի ինչպես աստվածային պայծառ օրը: Այսուհանդերձ, որոշ ծայրահեղ սուֆիական ուղղություններում ժխտում են սպիտակ քուրձի ինստիտուտը, համարելով, որ այն չի համապատասխանում միստիցիզմի բարոյա-գեղագիտական պահանջներին (Курбанмамадов, с. 43):

11. հմտ.՝

Šīxadī hat Lališe	Շեյխ Աղին եկավ Լալիշ
xemilīye xerqē r'eše	Զարդարված է սև քուրձով (xerqe)

կամ՝

Šīxadī hatīye Lališe	Շեյխ Աղին եկել է Լալեշ
xemilye dilqē r'eše	Զարդարված է սև քուրձով (dilq)

(*Джалил* О., *Джалил Дж.*, Курдский фольклор. кн. II, М. 1978 сс. 20-21)

Սև գույնը սուֆիականության մեջ նույնպես ունի հատուկ խորհուրդ: Սևությունը (*պրսկ.* sīyāhī), մասնավորապես, դիտարկվում է որպես աստվածային էության խորհրդանիշ, այն պատճառով, որ սևության մեջ որևէ տարբերակում մտցնելն անհնար է, և դիտողի աչքը չի կարող, որևէ բան տեսնել: Այնպես ինչպես աստվածային էությունն է անհասանելի մարդուն, սևությունն էլ անհասանելի է աչքին (Sajjādī M., Farhang-e estelāhāt-e erfāni, Tehran 1989 (1368), p. 489):

Սև գույնը սուֆիականության մեջ ընկալվում է նաև, որպես մահկանացուին անհասանելի և նրան ակնհայտ խորը, անհասկանալի և թաքնված գաղտնիքի խորհրդանիշ:

Եթե միստիկը կրում է սև քուրձ, ապա նրա հոգին պետք է հանդիսանա «գաղտնիքների գաղտնիքի (*արաբ.* sirr ul-asrar) գիրք» ուրիշների համար և յուրաքանչյուր միտք պետք է գաղտնի պահվի մարդկանցից (Курбанмамадов, с. 42):

Այս կապակցությամբ պետք է նշել նաև, որ եզդիների սուրբ գրքերից մեկը կոչվում է «Սև Մատյան» (Meshefē reš):

12. Abū l-Xeyr Abu Sa'īd, Asrār at-Tawhīd, Tehran 1992 (1371), p.194.

13. Hujvīrī Abu l-Hason, Kašf al-Mahjub; изд. текста - В.Жуковский, Л. 1924, сс. 59 - 60.

14. տես՝ Асатрян Г., О брате и сестре загробной жизни у езидов, - ՍՍԱԵԺ, Сп XIII, Г . 1984, с. 96.